

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

<<Վանաձորի Հ. Թումանյանի
անվան պետական

համալսարան>> հիմնադրամի
2017թ. գործունեության մասին

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան»
 հիմնադրամի 2017 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝			
1.1 Լրիվ անվանումը	«Վանաձորի Հ. Թումանյանի անվ. պետական համալսարան» հիմնադրամ		
1.2 Գտնվելու վայրը	ՀՀ, Լոռու մարզ, ք.Վանաձոր, Տիգրան Մեծ -36		
1.3 Պետական գրանցման համարը	222.160.924533		
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2016.08.15		
1.5 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	(0322) 4-30-96		
1.6 Պաշտոնական ինտերնետային կայքը	www.vsu.am		
1.7 Էլեկտրոնային փոստը	info@vsu.am		
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝	ՀՀ կառավարություն		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝	Էդուարդ Շարմազանով, Թունյան Արայիկ, Նալբանդյան Արթուր, Մկրտչյան Մանուկ, Սուքիասյան Ռոբերտ, Սայաթյան Մինաս, Շագաֆյան Ալեքսանդր, Բեժանյան Արմեն, Ծատուրյան Արմեն, Կլեկչյան Ղափիթ, Միլիտոնյան Էդվարդ, Աղյան Փափագ, Բաղդասարյան Վահրամ, Ղազարյան Հրաչիկ, Եղիազարյան Վանո, Ապրեսյան Սամվել, Շահվերդյան Մարգարիտա, Աղաջանյան Սամվել, Հովհաննիսյան Արեն, Ղափյան Արշալույս, Հարությունյան Ասյա, Աղաջանյան Մարտուն, Ստեփանյան Աստղիկ		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝	Գուրգեն Խաչատրյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց անուն, ազգանուն՝	Գուրգեն Խաչատրյան, Վահրամ Բաղդասարյան, Հրաչիկ Ղազարյան, Վանո Եղիազարյան, Սամվել Ապրեսյան, Մարգարիտա Շահվերդյան, Սամվել Աղաջանյան		
6. Իրականացված ծրագրերը՝	6.1 Ծրագրի անվանումը	6.2 Ծախսված գումարը	
	1. Բարձրագույն և հետբուհական կրթություն	1. 794.740,2 հազար դրամ	
	2. Հանրակրթություն	2. 78.339,2 հազար դրամ	
	3. Միջին մասնագիտական կրթություն	3. 26.235,5 հազար դրամ	
7. Ֆինանսավորման աղբյուրները՝	7.1 Անուն, ազգանունը կամ անվանումը	7.2 Ծրագրի անվանումը	7.3 Չափը
	1. Պետական բյուջե,		1. 297.781,9 հազար դրամ
	2. Ուսանողների վարձավճար		2. 557.267,9 հազար դրամ
	3. Այլ ծառայություններ և շնորհներ		3. 23.520,4 հազար դրամ
8. Անձեռնմխելի կապիտալի չափը	-		
9. Հիմնադրի ներդրումը՝	-		

9.1 Դրամական միջոցներ		9.2 Գույք	
		9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները -			
10.1 Նվիրատուի՝			
10.1.1 Անուն, ազգանունը կամ անվանումը	10.1.2 Նվիրված դրամական միջոցներ	10.1.3 Նվիրված գույք	
		10.1.3.1 Տեսակը	10.1.3.2 Արժեքը
1. ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ 2. Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի Տեմպուսի Վերիտաս օրագրի շրջանակներում 3. Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա ԻԱՄ		1. Գիրք 2.1 Համակարգչային տեխնիկա 2.2 Բուկլետներ 3. Գնդակ	1. 41,0 հազար դրամ 2.1 5.383,4 հազար դրամ 2.2 168,9 հազար դրամ 3. 4,5 հազար դրամ
11. Նվիրաբերությունները -			
11.1 Նվիրաբերողի՝			
11.1.1 Անուն, ազգանունը կամ անվանումը	11.1.2 Նվիրաբերած դրամական միջոցներ	11.1.3 Նվիրաբերած գույք	
		11.1.3.1 Տեսակը	11.1.3.2 Արժեքը
Արցախի հանրապետության Մարտակերտի թիվ 1 դպրոցին		Համակարգչային տեխնիկա	307,0 հազար դրամ
12. Պետական բյուջեից դրամական մուտքերի չափը		297.781,9 հազար դրամ	
13. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը		899.044,9 հազար դրամ	
14. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը		899.044,9 հազար դրամ	
15. Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) անուն, ազգանունը և կազմակերպության անվանումը		Աուդիտ Սերվիս ՍՊԸ Գոր Դավթյան	

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 3 (երեք) թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն



Գուրգեն Խաչատրյան

ստորագրություն, անուն, ազգանուն

Գլխավոր հաշվապահ

Գոհար Բաղդասարյան

ստորագրություն, անուն, ազգանուն



ԱՌԻՐԻՏ ՄԵՐՎԻՍ

ԱՌԻՐԻՏՈՐԱԿԱՆ և ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 18/1, 3-րդ հարկ, տարածք 54, Հեռ.՝ +37411-577-544,
Էլ. հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ կայք՝ www.audit-service.am

ԱՆՎԱՆ ԱՌԻՐԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

<<Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան>> հիմնադրամի ղեկավարությանը:

ԿԱՐԾԻՔ

Մեր կողմից իրականացվել է <<Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան>> հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

ԿԱՐԾԻՔԻ ՀԻՄՔԵՆԸ

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ <<Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար>> բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-ի Վարքագրի) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿԵՆՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ:

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Հիմնադրամը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլ ընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

ԱՌՌԴԻՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՌԴԻՏԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՄ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կանկաժամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարված հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռքբերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Հիմնադրամի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Հիմնադրամը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Ք. Երևան- 06.03.2018թ.

Աուդիտ Սերվիս ՄՊԸ-ի տնօրեն,

Որակավորված աուդիտոր **Գրո Դավթյան**



Որակավորված աուդիտոր **Արշավիր Զուրաբյան**